դրով է կատարուած։ Անտարակոյս Հելլադայում գտնուած Կիկլոպեան պարիսպներից շատ վաղ, մի քանի դարով վաղ են կազմակերպուած Ճորոխի Աւազանի աշկատարեան պարիսպները, որոնք ո՛չ միայն չորս-հինգ անգամ աւելի վիթխարի եւ անտաշ քարերից են շինուած, այլ 10—20 անգամ աւելի մեծածաւալ են, անտաշ ու կոպիտ։

Այս բոլորից նկատելի է, որ Ճորոխի Աւազանը ունեցել է·

1· Աշկատարեան շրջան· որը տեւել է դարեր եւ թողել է ա՛յնքան մեծ յիշատակարաններ, որոնք ցոյց են տալիս, թէ մարդկային ի՞նչ դերագոյն ճիգեր են թափուել այդ ամրոցների բերդերի եւ պարիսպների վրայ, որոնք կերտուել են դժոխային տանջանքներով։

2· Այս դարին յաջորդել է կոկուած քարային դարի շրջանը, երբ մարդիկ ո՛չ միայն քարը կոկել, ուղղել եւ դրանցով պարիսպներ ու աշտարակներ են կառուցել, այլ եւ կոկուած քարից ամէն տեսակ գործիքներ են պատրաստել ու մեզ թողել։

3· Պղնձի դարի նախնական շրջանը· երբ ո՛չ միայն պղինձը բովերից դուրս են բերել մեծամեծ քանակով, այդ պղնձից շինել են զէնքեր, զարդեր եւ ամաններ։ Այս շրջանը Ակկատ-Սումերների հետ ամբողջ Միջագետքում մտաւոր եւ արհեստների զարգացման հետ է կատարուել, մինչեւ գետերի ակունքը եւ Տայոց-Դայիանի երկիրը։